

**ՀՏԴ****Գրականագիտություն**

**ԿՈՐՈՒՏՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԲԱԶՄԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆ Պ.ՄԵՎԱԿԻ  
ՊՈԵՖԱՅՈՒՄ. «ԱՆԼՈԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՍՈՒՆ», «ԵՌԱՋԱՅՑ ՊԱՏԱՐԱԳ»**

### **Ն. Հովհաննիսյան**

Ժամանակին, նկատի առնելով կոմիտասի կերպարի ստեղծագործական ներքին առանձնահատկություններն «Անլոնլի զանգակատուն» պունմում, Գ. Մահարին գրում էր. «Բանատեղը կտրնի է կոմիտասը կոմիտասից և այն դարձրել խորհուրդ ու խորհրդանշան, մնալով սակայն միշտ կոմիտասի հետ»<sup>1</sup>: Լրացնելով Մահարուն՝ գնդարվեստական նույն արժանիքն է ընդգծում Դ. Գասպարյանը. «Կոմիտասի կերպարը Սևակի ահազնացող հոգևոր պողովական ոչ միայն նպատակ է, այլև միջոց՝ մեկնելու, ինչպես ինքն է ատում, հայոց չհասկացված բախտի բմայքը»:<sup>2</sup>

Մտահղանալով «Անլոնլի զանգակատուն» պոնմը՝ 1915թ. մեծ նահատակի՝ կոմիտասի ողբերգական կերպար-խորհրդանշող Սևակը բարձրածայնում էր ցեղասպանության և բռնազրավկած հայրենիքի պահանջատիրությունը: «Անլոնլի զանգակատուն» խորհրդանշ-պատկերը ոչ միայն հայ երգի հանճարի հարատևության, այլև ցեղասպանության ազգային հիշողության և արդար պահանջատիրության նուածայնն է՝ կոմիտաս-ցեղասպանություն-բռնազրավկած հայրենիք նուամիասնությամբ: «Իմ ողջ կյանքում ես մտքիս մեջ գրել եմ «Զանգակատունը»: Գրել եմ զանգական ձևերով՝ իբրև վեպ, իբրև վիպակ, իբրև ուսումնասիրություն, իբրև հոդվածների շարք, իբրև ողբերգություն կամ դրամա»<sup>3</sup>:

Գրապատմական նշանակության առումով կարևոր է պոնմի ստեղծման ժամանակաշրջանը՝ 1957-1958թ.: Սևակը վերասկզբնավորում և վերարնթացրավորում էր զաղափարագեղարվեստական այն ծրագիրը, որ ծնունդ էր առնլ 1920-ական թթ. գրաքաղաքական պայմաններում և ողբերգաբար ընդհատվել 1937-ով: Գեղարվեստի մտքի պատմության մեջ Սևակն առաջին էր, որ «ազգասպանություն » նկրույթով իրավաբարական բնորոշում տվեց 1915-ի ցեղասպանությանը. «Առաջին դեպքը ոչ կոտրածի, //առաջին դեպքը... ազգասպանության»:

Կոմիտասի հոգևոր կերպարն ուղեկցել է Սևակին ամբողջ կյանքում. «Իմ ողջ կյանքում, - ինքնակենսագրականում գրել է բանաստեղծը, - ես տառապել եմ կոմիտասափրությունից»: Մովկայում, նյարդայնության ախտորոշումով հիվանդանոցում պահեած, բանաստեղծը խնդրել է բերել կոմիտասի դիմանկարը. ժամերով նայում էր կոմիտասի դիմապատկերին: Ստեղծել էր կոմիտասի ծայնապնակների մի ամբողջ շարք: Ինչպես Զարենցի, Սևակի

<sup>1</sup> Գ. Մահարի, «Ամենից կրտսերք», «Սովորական զրականություն», 1961, թիվ 9, էջ 149:

<sup>2</sup> Դ. Գասպարյան, «Պարույր Սևակ: Կյանքը և ստեղծագործությունը», Ե., 2001, էջ 219:

<sup>3</sup> Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1974, էջ 391:

կոմիտասասիրությունը միաժամանակ հանճարի հոգևոր դրամայի ու մտագարության հոգեբանական ուժն վերապրումի դրսնորում էր: «Անլոնի զանգակատուն» պոնմում «Դն, ե~կ, Վարդապետ, // Մի խելազարվիր» տողի դարձարձումներով Սևակն արտահայտում էր նաև իր ապրումները. այստեղ հատվում- համաձուլվում են կոմիտասի և Սևակի տրամադրություններն ու մտասենուումները: «Սկիզբ դրվեց Մոսկվայում, սառնամանիրային մի օր: Նոր էի վերջացրել իմ «Մարդը ափի մեջ» ժողովածուն և հարյուրավոր ծխախտներ ծխելուց հետո դրւս էի նկել սառնամանիրի մեջ մի բաժակ գարենջոր լսնելու: Եվ աղմկոտ, կնդոտ, ցուրտ, ծխաշատ գարենջրատանը, հեռավոր Մոսկվայում, հանկարծ ռադիոյից հնչեց կոմիտասայան նրգը: Ինձ համար ամեն ինչ պարզվեց մի վայրկանում»<sup>1</sup>:

Սևակի վերահմաստավորմամբ՝ կոմիտասի գործը համահավասր է Մաշտոցի գործին: Այս վերաբժնորումը նաև 4-րդ և 20-րդ դարերի պատմական իրադրությունների ներքին զուգահեռի վրա գրի և երգի ոգենեն ուժի գերազահատումն է՝ ազգային գյոյնթյան ճակատագրական պահին: «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոնմում՝ գրված դարձյալ Մոսկվայում 1952-1953թթ., Մաշտոցի պատմական դերը Սևակը նշանափերում էր նաև միանական հայրենիրի հոգևոր վերատեղման գաղափարի արժեկշռով:

Մեր բաժան-բաժան հողերը նորից

Այդ Նա էր միայն, որ բերենց իրար

Ու միավորենց... արդեն մեր մտքում:

Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ գրված «Խոսք հավաստիքի », «Մայրենի լեզու», «Հայոց լեզու» գործերում, վերամիավորենով լեզու-հայրենիք գյոյաբանությունը, Սևակը գրում է. «Զկարողացան քեզ մեզնից լսել...// Ինչպես չեն կարող լսել մի դրոշ, // Որ հազարամյա դաժան մարտերում// Փողիողացել է միշտ էլ... սրտերում»: Հաջորդում է Մաշտոցով, ապա նաև կոմիտասով խորհրդանշվող կորոյալ հայրենիրին տված երդումի խոսքը կամ «Խոսք հավաստիքին».

Եվ ընդդեմ այս բաց անարդարության

Առայժմը մենք մեր աշքերն ենք փակում,

Բայց փակում այնպես,

Ինչպես փակում են մարդիկ մատները,

Եվ ստացվում է դրանից... բռունքը...

Երդումի բարձրագույն ինքնարտահայտություն է «Հայրենիք» պահաստեղությունը: Խոսքը վերածում է երդումի, երդումը՝ հավատամքի. «Քեզնով երդվելիս// Զնորքս դնում եմ իմ սրտի վրա՝// Մեղմելու նման, // Որ... հանկարծակի չպայթի դրոից...»:

Համազանգերով ու դրանցներով ծավալվող «Անլոնի զանգակատուն» պոնմը կառուցված է ազգային երգարվեստի առանձնահատուկ նրբերանգներով, եղանակավորված երաժշտական կշռությունով, բարի ու հանգի

<sup>1</sup> Նոյն տեղում:

համաշափությամբ: Բանաստեղծի խոսքն ու կոմիտասի երգը համալրում են իրար: Պոեմի խորածային բնույթը արդյունք է ոչ միայն Սևակի կողմից ազգային երգարվեստի հետևողական ուսումնասիրության, այլև բանաստեղծի երաժշտական ննդրին օժտվածության: «Լառուցվածքը՝ ըստ կոմիտասյան երգերի, այսինքն՝ շարադրել կոմիտասի ողջ կյանքնել ըստ նրա համապատասխան երգերի, եթե որք է՝ «Անտունի», եթե պանդուստ է՝ «Լոռունկ», եթե սիրո մասին է՝ «Սոնա յար»: Գործը մտահղացված էր իբրև համանվագ՝ սիմֆոնիա, կամ իր եկեղեցական կարգը նկատի ունենալով՝ իբրև օրատորիա»:<sup>1</sup> Այնուհետև՝ «Սիրում էր կոմիտասյան երգը և երգում էր այնպիսի մի ննդրչնանքով ու ոգևորությամբ, որ օտար մեկի կամ լսողության նշոյլ իսկ չունեցողի մեջ կարող էր արյան երք առաջացնել »:<sup>2</sup>

Ազգային գոյմերի ու երանգների ննդրին խտացվածությամբ, բանաստեղծական հանգերգով, ժողովրդական խորքի զգացական լիցքներով, ինչպես նաև ընդգրկման տարրողությամբ ու բազմաձայնությամբ պոեմը հասնել է բանարվեստի մի նոր որակի՝ համանվագայնության. «Արդի բանաստեղծության հիմնական տիպարը, երաժշտական տերմինով ասած, ես համարում եմ ոչ թե երգային մտածողությունը, այլ համանվագայինը (սիմֆոնիզմը),- գրում է Սևակը: -Ոչ թե մենաձայնությունը, այլ բազմաձայնությունը: Եվ սիմֆոնիզմ ու բազմաձայնություն ասելիս ես չեմ ենթադրում անպատճառ սիմֆոնիա (պոեմ): Սիմֆոնիզմ և բազմաձայնություն նոյնիսկ 10-15 տողանոց բանաստեղծության մեջ: Ոչ թե մի երգ, որի նղանակը վերջանում է առաջին իսկ տնով, այլ մի երգ, որի յուրաքանչյուր հաջորդ տունը նախորդ տան նղանակը փոփոխակում ու զարգացնում է բլուրովին այլ ձևերով»:<sup>3</sup>

Սևակը գտում էր գեղարվեստական այնպիսի ձևի, որ անհատական կերպարով ամբողջացներ ժողովրդի գոյաբանության համապատկերը ցեղասպանության և բռնազավթված հայրենիքի ողբերգությունը: Գեղարվեստական ձևի ննդրին որոնումների ոգեղենն ճանապարհին տոհմիկ հայ երգը՝ իր գողթան, վիպական, հոգևոր ու ժողովրդական առանձնահատկություններով, դառնում է արտահայտման գեղագիտական կերպ, կոմիտասի ճակատագիրը՝ գեղագիտական միջոց: Կոմիտասի կերպարի ոգեղենացումով Սևակը հանճարի կյանքն ու ճակատագիրը համաձուլում է ժողովրդի պատմության ու ճակատագրին: Բնորոշ է պոեմի սկիզբը. «Իր ժողովրդի զավակն իսկական // Ժողովրդի պես ինքն էլ որք մնաց...» : Կոմիտասի կենսապատկերի մեջ աստիճանաբար բացվում է հայաշխարհիկ կյանք՝ ստեղծագործ առօրյայով, ավանդույթներով ու տոնավայրերուններով, վերելքներով և անկումներով, ազգային անընդմեջ ողբերգություններով: Արյունքում պոեմի համազանգերը միաժամանակյա դողանջներով զանգահարում են կոմիտասով խրիդանշվող

<sup>1</sup> Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ.5, Ե., 1974, էջ 391-392:

<sup>2</sup> Ա. Արիստակենյան, Պարույր Սևակ, Ե., 1974, էջ 161:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 258-259:

ցեղասպանության և կորցրած հայրենիքի զավի, տագնապի, ընդվզման և համահավաքի հարահունչ ձայնը:

«Գրել կոմիտասի մասին,- ինքնակենսագրականում վերագնահատում է Պ. Անակը,-հավասարազոր էր գրել հայ ժողովրդի վերջին հարյուր տարվա պատմությունը՝ ժողովրդի կյանքով ու երազանքներով, կենցաղով ու գոյամարտով, երգով ու լացով, եվրոպական դիվանագիտությամբ ու թուրքական բարբարությամբ, ազգագրությամբ ու ազգագիտությամբ, անցյալով ու ապագայով»:<sup>1</sup> Պոնմը բաղկացած է հինգ համազանգից և քառասունվեց դողանջից: Համազանգին պոնմի վերջում հաջորդում է «Անագնացող արձագանք»-ը: Պոնմի ներքին բովանդակությունն ընդհանրացնող գաղափարի խորհրդանշիցը «Անլոնի զանգակատուն» ձայնապատկերն է: Կյանքի սկիզբն ազդարարող «Յայզալոյսի համազանգ»-ն ընդհատվում է «Եղերնի համազանգ»-ով: Առանձնադիտնի է դողանջների տրամաբանական կառուցվածքը ևս. առաջին դողանջը ծնունդի «Ավտիսի դողանջն» է, վերջին դողանջը՝ «Թաղման և հարության»:

«Յայզալոյսի», «Արևագալի» և «Միջօրենի» համազանգներում նաև՝ դողանջում է կյանքի օրինաբանությունը՝ արևի ու լուսի խորհրդանիշներով, ապա՝ դողանջի թրթուն ձայնները հետզհետև վերածվում են մետաղյա ահազանգների: «Ավտիսի», «Որբության», «Յնծության», «Հուսո», «Ներման», «Արթնության», «Հսկման», «Մեղսական», «Հայտնության» և «Օծման» դողանջներում բնկրելկվում են կոմիտասի կյանքի վիպական ձայնապատկերները: Կոմիտասի ծնունդը կապվում է լուսի և արևագալի պատկերների հետ: Այնուհետև՝ կոմիտասի որբությունը, Ըսմիածնում՝ հայոց վեհափառի մոտ, երգի բնությունը, ուսման տարիներն ու հոգելկերտվածքի ձևավորումը՝ աստիճանաբար միախառնելով նրան ժողովրդի պատմության ընթացքին: «Արևագալի» համազանգում, որ դողանջում է «Ամառնօրյա», «Աշնանաշունչ», «Անագնացող», «Բնաշխարհիկ», «Յավի և բողոք», «Պանդլստական», «Լոտորածի», «Զարթոնքի և կենսատման», «Զարմանքի», «Ներսուսկան» ձայնապատկերներով, կոմիտասի կերպարի ներքին գարգացումը վիպական կերպածների փոփոխակիրում է ոգենեն վիճակի:

Պոնմի առանցքային լսնդիրներից է կոմիտասի՝ ազգային կյանքում պատմական առարելության բացահայտումը, որին միտված են «Արևագալի», «Միջօրենի» և «Ծավալփող» համազանգները: Նաև և առաջ կոմիտասը մաքրագործում, վերածնում, կատարելագործում է ժողովրդի պես ծովման, աղավաղման ենթարկվող տոհմիկ հայ երգը. «Ոչ միայն ժողովուրդն է նրանց ծնում, - գտնում է Անակը, - այլև նրանք են ժողովուրդ վերածնում»:<sup>2</sup> Ազգային երգի ինքնության վերածնությամբ կոմիտասը բռնաձուլման և համբնդիանրազման դեմ դնում է ազգային դիմանկարի պահպանման գորությունն ու ուժը: «Նայելով ահա այս բարձունքից, - գրում է Անակը,

<sup>1</sup> Ա. Արիստակենյան, Պարույր Անակ, էջ 163:

<sup>2</sup> Պ. Անակ, հ. 5, էջ 131:

Կոմիտասին չի կարելի համեմատել իր մեծ ժամանակակիցներից և ոչ մենքի հետ: Չատ իր գործի և դրա հետևանքների՝ նրան հայր կարող էր դառնալ միմիայն Մաշտոցը:<sup>1</sup> Ազգային հոգեկերպից ու մտածելակերպից զատ՝ հայ երգը, շնորհիվ Կոմիտասի, վերագտնում է ազգային գոյակերպի առաջնային դերը՝ կենդանի պահելով նախնական ջիղն ու ողին: Միաժամանակ Կոմիտասը հավաքագրում, նդանակավորում, կրուստից փրկում է բնաշխարհիկ հայ երգի նշխարձները՝ ազգային երգարվեստում պատմական նույն դերն ու նշանակությունն ունենալով, ինչ Խորենացին՝ առասպելաբանության մեջ: Պոլսում Կոմիտասը ստեղծում է երերհարյուր հոգանց «Գուսան» երգչախոսմբը՝ հավաքագրելով հայոց գավառների շնորհալի ձայներին, հանդես է գալիս դասախոսություններով, հղանում «Վարդան» և «Անուշ» օպերաները՝ իր գործունեությամբ անգնահատելի ավանդ թողնելով հայ երգարվեստի գարգաման ու տարածման գործում:

Կոմիտասի դիմապատկերը քանդակելիս Սևակն ընդգծում է «Վարդան» օպերայի հղացման գաղափարը՝ որպես Կոմիտասի ներհայեցողության մի եզր՝ մատնանշելով հայաշխարհիկ երգի ոգեղեն ազդեցությունն ազգային դիմադրողականության բարձրացման գործում: Ազգային գոյության պահպանման համար այլևս անկարելի էր չմաքրանել պետականորեն բռնի պարտադրվող օտար մշակույթների դեմ, պետք էր վերականգնել հայրենիքի ճեղքած հատվածների միասնությունը, ազգովին միասնաբար դիմադրձել ծույն սպառնապիրին: Կոմիտասյան երգը դարձավ ազգապահպան մի նոր զենք կամ դիմադրության մի նոր գորություն, ինչն էլ բանաստեղծին իրավունք է վերապահել Կոմիտասի մեծությունը բաղդատելու Մաշտոցի մեծության հետ: «Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց, // Գիրն ու տառն ես Հայոց երգի...»:

Միաժամանակ հանձին Կոմիտասի, հայ երգը՝ որպես ազգային կերպարանքի ոգեղեն մի ձև, արժանապատիվ ներկայությամբ նվաճում է միջազգային ճանաչում՝ Եվրոպական մտավոր ուշադրությունը բևեռելով Հայաստանի վրա: Զեկուցումների, դասախոսությունների, համերգների համար Կոմիտասը հրավիրվում է Փարիզ, Բնուղին, Վիեննա, Ժնև, Լոզան: Եվրոպական դիվանագիտության քառուղիներում շարքը կազմուելով Հայկական հարցին զուգահեռ՝ Կոմիտասի միջոցով հայ երգն ու տաղը ժողովրդի սերն ու ցավն են համասիռում Արևմուտքի երկրներում: Բանաստեղծը Կոմիտասին պատմականորեն ներկայացնում է որպես աշխարհում հայության լինելության հանճարեն ապացույց:

Պոնմի հիմնական գաղափարը խտացված է «Եղեռնի համագանգ»-ում, որի դողանջներն ազգային ողբերգության ժողովրդական ողբերգեր են: Պատկերային համակարգի ենթախորքերում առկա հուզական լիցքը զնալով շիկանում է: Պոնմի այս մասում միակ և եզակի անգամ մահվան արսորի

<sup>1</sup> Նոյն տեղում:

անապատներով ձգվող ժողովրդի ուժահատ, տանջալլով շարքերով տարածվում է կոմիտասի աստվածներն ձայնը. «Յաղագը հարց, նորաց մերոց, // Որք են տարենալ ի գերութիւն, // -Տէ՞ր, ողորմեա՛...», որին հետևում է բանատների արձագանքը. «Խակ հայրենը արդեն չկա՞ն, // Եղբայրներին թուր ու ճագան // Վերջ են տվել սար ու ճորում...»:

«Եղենինի համազանգի» սկիզբը «Ընդհատված» դողանջն է, որին ձայնակցում են «Տագնապի», «Նախաճիրի», «Եղենական», «Աքսորի», «Մթագնումի», «Յնորման» և «Անանց սուզի» դողանջները: Պատմական դեպքերի և իրադրությունների ճշգրիտ ընթացքին զուգակցվում են ժողովրդի գոյաբանության խոհափիլսովիայությունն ու զգացական ուժեղ բռնկումները:

Հայկական հարցից Թուրքիան ազատվեց  
Հայաստան երկրում հայ շթողնելու մի ահեղ նլրով...  
Մի ո՞հ ժողովուրդ մեկ-մեկ թրատել,  
Մի ամբո՞հ անտառ արմատից հատել...

Սևակը պոնզիա է բնրում զնդապանության հաստատման հիմնախնդիր՝ «Եվ հիմա՛, // Հիմա՛, // Երք կոտորած չէր, երք ջա՛րդ չէր, // Այլ մա՞հ՝ // Մահ համատարած և համազային...» «Ծնդսմին ներկայացնելով ազգային տեսակի խնդիրը. «Զի ներվում և այն, // Ինչը կոչվում է առավելություն...»: Հետևելով իր մեծ նախորդին՝ Ե. Զարենցին, բանատները վերապատկերում է զնդապանության տեսարանները՝ ժողովրդական ողբերգի լիցրով ու հանգով. «Ջուն մաղնց մեր բաց զլիկն, // Ջուն մաղնց կրակի պն, // Գարուն ա, ձյուն ա արել...»: Կոտորածի պատկերներին հաջորդում են արսորի ճանապարհի մահապատկերները.

Լիկանքի մեջ նահատակված անմեղ կոլյսեր

Ու լուս հարսեր

Զանում էին լանջերն իրենց ծածկել հողով անապատի:

Դեղին հողով,

Ոչ թե քողով,

Որ և չկար,

Ինչպես չկար ո՛չ սրբություն,

Ո՛չ էլ աստված...

Աքսորի դողանջում ծավալվում են կոմիտասին խնլազարության հասցնող պատկերները, որոնք, մտապատկերների վերածվելով, հոգեբուժարանում քանի ափուի շաղագիներն նրա վիրավոր միտքը՝ ամեն օր վերստին ցնորելով նրան: Պատկերի ու մտապատկերի իրական կապի մասին է, որ Սևակը գրում է. «Եվ պատկերներից այս ահազարիուր, բայց և իրական, // Նախ ցնորվեցին աչքերը նրա // Եվ ապա մի՛տքը, մի՛տքը տիրական...»: Աքսորի դողանջի վերջին հնչյունները կոմիտասի հոգևոր ցավի ահավոր ողբերգությունն են. «Ուր ո՛չ մահ կար, // Ո՛չ կյանքի շողը»: Հաջորդող «Մթագնումի» դողանջը բնկրենկվում է ամբողջովին կոմիտասի հոգևոր ցավի հնչյուններով՝ տարածնելով անանց մրմուի մորմոքները: «Դե-

եկ, Վարդապետ, // Եկ ու մի զնդիր» կրկնատողնրով բանաստեղծն ասես դաշնում է հոգեգալության դատապարտված հանճարի, միաժամանակ բնաջնջված ժողովրդի և բռնազավթված հայրենիքի ներքին ծայնը: Խոսրի զգացական լիցրը փոխակերպում է հրապարակալսոսական կրքի.

-Համայն աշխարհում

Այդ քանի՝ նրկիր Արարատ ունի,-

Ո՞վ էլ որ չասի՝

Աստվածաշունչը իր մագաղաթն դնմքը դնմ կանի

-Ու կասի՝ կարդա...»

Ազգային մեկդարյա միտքը խոշտանգող հոգեկան ցավը վերանորոգող հարապատկեն է Արարատ լեռ՝ որպես զնդասպանության հետևանքով բռնազավթված հայրենիքի խորհրդանիշ: «Մեզ լավ ծանոթ է ծաղրուծանակը այս հոգեկարտիչ», - զրում է բանաստեղծը՝ վերիշենլով հայոց պատմության ողբերգական դրվագներից մենք՝ մորթագերծված Վասակ Մամիկոնյանի և Արշակ թագավորի հայտնի պատմությունը. «Արարատն - այսպես-ողբեն են ահա Երևանի դեմ...»: Կորուստի ցավն ու ցասումը հանգեցնում են աստվածամերժության աշխարհայացրային գաղափարի. «Աստծուն ժխտում է Արարածն անզամ»: Քրիստոսամերժ գաղափարի մենք այլ դրսորում առկա է «Եվ այր մի՝ Մաշտոց» պոեմում:

Չորավոր էին աստվածները իին,

Այնքան զորավոր,

Որ անկենդ էին ու չին ստում,

Իսկ պատմության մեջ կան ժամանակներ,

Երբ ով չի՝ ստում՝ պիտի կործանվի...»

«Յնորման» դողանջում խոսքը դարձյալ շարունակվում է ժողովրդական ողբի հանգերգով և մարում «Անանց սուզի» դողանջով. «Նա չհասցընց իր օպերայում // Թշվար Անուշին խնլացընորեն, //Եվ ինքը, ինքը զնորվնեց...»: Խոսրի երաժշտական ոիթմը զնալով արագանում է, որպեսզի աստիճանաբար մարելով՝ հասնի վերջերգին.

Փարի՞զ, Փարի՞զ...

Հիմա դարձյա՛լ,

Վերստին է նա քեզ զալիս՝

Ո՛չ երգելու, նվազելու...

Գալիս է նա, որ մի՞տք մուրա...

«Զանզակատունը» դողանջում է հոգլոր նդանակի մի այնպիսի կարգով, որ մարող հնչյունները վերածնվում են ահազնացող արձագանքներով, իսկ «Ահազնացող արձագանք» -ի դողանջները ազգային վերածնության ու նոր սկզբի զանզահարությունն են: Ազգային վերազարթոնքի սկիզբը համահավաքն է, որ զաղափարանշվում է կոմիտասի վերադարձով և Մասհսների հսկումի տակ հարության խորհուրդով.

Ու վերադարձավ,

Որ էլ չգնա՞»

Որ մրասած հոգին նորից տարանա  
Ժողովրդական սիրո տաք օդով...  
Հայացքի մուժը այնտեղ չքանա,  
Աչքերը փայլեն իրենց իին զոլով  
Ու նորից ցրեն  
Ու փռեն  
Չորս կողմ  
Մարդեղացումը աստվածայնության...

Թաղման և հարության դողանջի վերջին զանգերն ահեղանում են՝  
արձագանքելով կոմիտասի հարահունչ փառերգությունը. «Դու մեր կարոտ ու  
մեր մորմոր, // Մեր տաղի քուրմ, // Մեր խաղի մող, // Մեր մշտահունչ ու  
մշտարթուն, // Ասլոնի զանգակատուն...»:

«Անլոնի զանգակատուն» պոեմը, ինչպես նկատել է Ս.  
Աղաբարյանը. «Բանաստեղծական տաղանդի իսկական թխվածք է, խոր  
ներշնչման և գրական անորանալի վարպետության արտահայտություն,  
սովորական չափածոյի նոր նվաճումը»:<sup>1</sup>

«Զանգակատան» անլոնի դողանջի ձայնապատկերը շարունակվում  
է «Եռաձայն պատարագ» -ում: Եթե մի դեպքում զանգակատունն է  
դողանջում ցեղասպանության և կորուսալ հայրենիքի ձայնը, մյուս դեպքում  
Սիսն ու Մասիսն են եռաձայնում՝ «Ողբամ մեռելոց, բնկանեմ շանթեր, կոչեմ  
ապրողաց: Գնդարվեստական պատկերը կերպափոխվում է  
խոհափիլիստիկայական պատկերի՝ նախանշելով պոեմի ներքին բնույթը»:

Սիսն ու Մասիսն են դողանջում անվերջ-անդադար-անդուն: Գողթան  
երգերի չափ ու կշռություն,  
բամբ բամբիռների նվագակցությամբ,  
շարականների նլսէջումով պատարագատու...

Խորագրի ընտրությունն ունի իր նախապատմությունը: Ինչպես նկատում  
է Ա. Արիստակնայանը. «Եռաձայն պատարագ»-ի՝ իբրև երեքմասնյա  
ռեքվիենմի ծնունդի ազդակը կապված է Շաֆհաուզենի (Շվեյցարիա) տաճարի  
փորքիկ զանգի պատմության և նրա վրա փորագրված անհայտ հեղինակի  
լատինական ասույթի հետ՝ «Լոշեն ապրողաց, ողբամ մեռելոց, բնկանեմ  
շանթեր», մի ասույթ, որ բնաբան է դարձել Շիլերի «Զանգակի երգ»-ի  
համար»:<sup>2</sup>

«Ամեն ճշմարիտ գրող իր ժողովրդի անձնագիրն է կամ իր  
ժողովրդի «ուստական գործը»<sup>3</sup>, - գրում էր Սևակը՝ զաղափարանշելով նաև  
Հայ Դատի իր պահանջատիրությունը: «Եռաձայն պատարագ»-ում  
հիշողության մեջ անդրջրինդեղի պատմական զուգադրություններով բնկվող  
զնդասապանության պատկեր-ապրումը այսպիսի դիմադարձ արձագանքի է  
հանգում. «Եվ ինչո՞ւ: // Արդյոք ո՞չ այն պատճառով, // որ աստվածները

<sup>1</sup> Ս. Աղաբարյան, Ովկորություն ու փարպետություն, »Գրական թերթ«, 1959, 25 դեկտեմբերի:

<sup>2</sup> Ս. Արիստակնայան, Պարույր Սևակ, էջ 375:

<sup>3</sup> Պարույր Սևակ, հ. 5, Ե., 1974, էջ 299:

տանել չեն կարող իրենց նմանին»: Բնույթով պոեմը պատարագ-ռերվիթմ է. Սևակն այն գրել է ցեղասպանության 50-րդ տարելիցին՝ 1965-ին: Պատարագի պատկերի զաղափարը, ըստ երևույթին, կապված է ապրիլի 24-ի համազգային սզբ երթի հետ, որ սկիզբ է առել հենց պոեմի գրման տարեթվից: Պատարագի հոգևոր արարողության երաժշտական ներքին նղանակով հնչում է բանաստեղծի նորածայնի առաջին դրույթը.

-Ողբամ մեռնլո՞ց,  
անթա՞ն մեռնլոց:  
Մեկ չեն նրանք  
և ոչ էլ երկու:  
Նրանք բյո՞ւր-բյուրո՞ց,  
նրանք, ազգ-ազի՞նք...  
Չմեռա՞ն նրանք, այլ սպանվեցին՝  
լեզեն առ լեզեն,  
փաղանգ առ փաղանգ...

Յնդասպանության ողբերգության և ազգային ինքնապաշտպան դիմադրությունների հիշողության խոհ - ապրումները լրացնում են իրար ինչպես «Անլոնի զանգակատան» մեջ, այնպես էլ «Եռաձայն պատարագ» -ում: Կոտորածների ողբերգին կամ ողբերգական խոհին նման դեպքերում հաջորդում են փառերգությունը կամ ներքին ակնածանքի ինքնարտահայտումը.

Կար նոսմատնյա մի խաչակնքում  
և նոսմասնյա մի մեծ նպատակ...  
թրի-սրի դեմ,  
երի դեմ, ջրի,  
հրանոթի դեմ ու գնդացըրի,  
նրեկվա նման ու վաղվա նման  
մարտնչում էին ակրա-ատամով...  
Վանում, Ուրֆայում, Մուսայի վրա,  
Գարահիսարի կիսավեր բերդում...

Պոեմում առանձնադիտելի է «երեք»-ի զաղափարանշումը Սևակի կողմից՝ «Եռաձայն», «Եռամմատնյա», «Եռամմասնյա», որոնց մեջ անդրադարձվում է աստվածաշնչյան Սուրբ Երրորդության խորհուրդը: Հավատարմության խոստովանությունն ինքն իր առջև, որ սուկ անհատական հավատարմություն չէ, այլ համազգային ու համաժողովրդական, խոհափիլխոփայական այսպիսի դրսւորում է ձեռք բերում.

Մեր...հայրենի՞քը մեզնից դատարկվեց:  
Բայց...ոչ մի վայրկյան, ոչ մի ակնթարթ,  
մենք չե՞նք դատարկվել մեր հայրենիքից:  
Մենք սպանվեցինք մեր հայրենիքում,  
բայց հայրենիքը մեր մեջ չսպանվե՞ց...

Պատմական հայրենիքից ժողովրդի բռնագաղթին զուգահեռ բանաստեղծն աղաղակում է հոգու աքսորի մասին, կենդանի մարմինը լքած հայ հոգու մասին, որ ինքնառողնումի հետքերով ձգտել է կորուսայ հայրենիք և զամվել նրան: Հոգու և մարմնի այսպիսի աքսորը կրկնակի կյանքի արժեկշիռ ունի, «քանզի ամենազորեն բանն աշխարհում հիշողությունն է», - զրում է բանաստեղծ՝ ճակատամարտ տալով պատմական անարդարության դեմ: Սևակի անհաշտությունը վերաճում է ազգային ընթացք գաղափարանշող սկզբունքի.

Հայրենիքն այն է, որ գտնված է  
ի սկզբաննե, ի ծնն և միշտ,  
ուրեմն նաև նա չի էլ կորչում...  
Հայրենիքն այն է, որ ոչ թե կորչում,  
այլ ընդամենը հափշտակվում է,  
ինչպես որ ձեռքի ափը չի կորչում,  
երբ նա փակվում է,  
բայց և չի կարող միշտ մնալ փակված,  
ինչպես հայրենիքն՝ միշտ հափշտակված...

Ժողովրդի պատմության վկայի բարձունքից բանաստեղծի պատգամը նաև՝ ազգահավաքն է, ապա՝ հայրենահավաքը. «Դու այսուհետև ժողովվես պիտի //նախ ինքդ քո մեջ, // և ապա՝ քո շուրջ»: Ազգային գոյափիլիստիկայության ընդհանրական այս խոհը բարձրանում է կարմիր ջարդին հաջորդած սպիտակ սպանդի շարունակվող վտանգին դեմ հանդիման.

Եվ հիմա արդեն նա զանգ չի հատում,  
այլ գրակում է,  
չի կտրում ձեռքեր, այլ վարձում ընդմիշտ,  
չի առևանգում, այլ հմայում է,  
չի հեղում արյուն, այլ ծախս է առնում  
և, միացնելով երակ երակի,  
իր ամենակոլ արյանն է խառնում...

«Եռաձայն պատարագ» պոեմը, ինչպես ենթադրում է հոգևոր պատարագի կարգը, փակվում է հայրենիքի համընդիմանուր պաշտամունքի խոստովանությամբ և խոստովանության մեջ առկա օրհնաբանությամբ.

Թերևս աշխարհում ոչ մի հայրենիք,  
մեծ ու վիթխարի, զորե՞ն ու կարող ոչ մի հայրենիք  
յուրայինների սրտում ու հոգում չի հարուցանում  
այնքան սեր անանց ու կարո՞ն այնքան,  
որքան այս մի բուռ-բռում սեղմրված երկիրը հայոց...

Սևակի հայրենասիրական պոեմիան իր ներքին առանձնահատկություններով և գաղափարաբանական արժեկշոռով գնահատելի ավանդ է ազգային բանարվեստի և, առհասարակ, ժողովրդի գոյաբանության նոր վերելիք պատմության մեջ:

Многозвучие утраченной родины в поэзии П. Севака. «Несмолкающая колокольня» и «Трехголосная литургия»

Н. Аванесян

*Резюме*

Статья посвящена внутренним особенностям и идеологической ценности патриотической поэзии Паруира Севака, которая является ценным вкладом в национальное устное творчество и в новый виток развития народа в истории. В истории образной мысли, Севак был первым, кто термином «убийство нации» придал политico-правовую окраску геноциду 1915 года.

Образ «Несмолкающей колокольни» - это национальная память о геноциде и голос справедливого требования, единства: Комитас—геноцид и захваченная отчизна.

Polysounds of the Lost Homeland in P. Sevak's Poetry.  
 «Incessant bell tower», «Liturgy for Three»

N. Avanesyan

*Summary*

The article is devoted to the internal characteristics and ideological values of patriotic poetry Paruyr Sevak, which is a valuable contribution to the national story-telling and a new round of growth in the history of the people. In the history of imaginative thought, Sevak the first has given the legal and political coloration of genocide of 1915 by the term «murder of the nation». The image of «The incessant bell» is the national commemoration of the genocide and the voice of the just demand, of the unity: Komitas, genocide and captured homeland.

*Գրականություն*

1. Մահարի Գ., Ամենից կրտսենք, «Սովորական գրականություն», 1961, թիվ9:
2. Գասպարյան Դ., Պարույր Սևակ: Լյանքը և ստեղծագործությունը, Ե., 2001:
3. Պարույր Սևակ, Երկնրի ժողովածու 6 հատորով, հ.5, Ե., 1974:
4. Արիստակնյան Ա., Պարույր Սևակ, Ե., 1974:
5. Աղարաբյան Ա., Ոգևորություն ու վարպետություն, «Գրական թերթ», 1959, 25 դեկտեմբերի: